







<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀՃՄ ԾԻԿ</p>		
		<p>Հայաստանի Հանրապետություն</p>
<p>Պայմանագիր No. 02 SC 002 / VO N°6</p> <p>Երկու նոր կամուրջների (Մարմարաշեն և Բուրաստան համայնքների համար) մանրամասն նախագծային փաստաթղթերի պատրաստում, Տրանշ 1-ի շրջանակներում գոյություն ունեցող ուղեանցների փոխարինում, Տրանշ 1-ի և Տրանշ 2-ի լրացուցիչ նախագծային առաջադրանքների կատարում</p> <p>Ասիական զարգացման բանկ, վարկ No. 2561-ARM</p> <p>Հյուսիս – հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր</p>		
<p>Համալիր ստուգման արդյունքների հաշվետվություն</p>	<p>Հողի օտարում/Տարաբնակեցում</p>	
		
<p>Փուլ 1</p>	<p>Մարմարաշեն. Նոր ուղեանցներ ԿՄ 15+439-ում</p> <p>Բուրաստան. Նոր ուղեանց ԿՄ 24+147</p> <p>Համալիր ստուգման արդյունքների հաշվետվություն (ՀՄԱՀ) հողի կամավոր նվիրաբերության վերաբերյալ</p>	
		

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
I. Ծրագրի պատմությունը	6
II. Ծրագրի շրջանակը.....	6
III. Ինչպես առաջ եկավ հողի կամավոր նվիրաբերության անհրաժեշտությունը.....	7
IV. Համալիր ստուգման արդյունքների հաշվետվության նպատակն ու շրջանակը.....	7
Բ. ՀՈՂԻ ԿԱՄԱՎՈՐ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.....	8
I. Ոչ հարկադիր տարաբնակեցում.....	8
II. Հողի կամավոր նվիրաբերություն. Չափանիշներ և պայմաններ.....	8
Գ. ՀՈՂԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	10
Դ. ԿԱՄԱՎՈՐ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ.....	13
Ե. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ	14
Զ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	16
Է. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	18
Հավելված 1. Ազդեցության ենթակա հողակտորների ցանկը.....	20
Հավելված 2. Հանրային լուսմների մասնակիցների ցանկերն ու լուսանկարները.....	24
Հավելված 3. Համայնքային հողերի կամավոր նվիրաբերության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ.....	29

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԵԱ	Ազդեցության ենթակա անձ
ԱԳԿՊԿ	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
ԱՔՀ	Անվտանգության քաղաքականության հայտարարագիր
ԱԵՏՏ	Ազդեցության ենթակա տնային տնտեսություն
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսավորման գործիք
ԲԼՄ	Բողոքների լուծման մեխանիզմ
ԳՄ	Գործադիր մարմին
ՀԼ	Հանրային լսում
ՀՄԱՀ	Համալիր ստուգման արդյունքների հաշվետվություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՕՏ	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԿՆ	Տրանսպորտի և կապի նախարարություն
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն
ԿՆՀԽ	Կամավոր նվիրաբերության համակարգման խումբ
Տ1	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ծրագիր, Տրանշ 1

ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

<p>Ազդեցության ենթակա տնային և տնտեսություն (ԱԵՏՏ)</p>	<p>Ազդեցության ենթակա տնային տնտեսությունը որպես ամբողջական միավոր: ԱԵՏՏ-ն գործում է որպես մեկ տնտեսական և ընտանեկան միավոր և կարող է բաղկացած լինել մեկ անձից, նույնեքար ընտանիքից կամ ընդլայնված ընտանիքից: Դա փոխհատուցում ստացող/վերականգնման ենթակա կարևորագույն միավոր է:</p>
<p>Ազդեցության ենթակա անձ/անձինք (ԱԵԱ)</p>	<p>Ցանկացած անձ, ով Ծրագրի իրականացման արդյունքում մշտական կամ ժամանակավոր ազդեցության է ենթարկվում իրեն պատկանող կամ իր կողմից փաստացի օգտագործվող անշարժ գույքի (հողի, տան, շենք-շինության) օտարումից, և դրա արդյունքում՝ եկամտի, փաստացի կարգավիճակի, աշխատանքի, բնակության վայրի և կենսամակարդակի մասնակի կամ ամբողջական կորստից: Մա ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ տնտեսական տեղահանումը:</p>
<p>Չձևակերպված օգտագործողներ/ վարձակալներ</p>	<p>Ազդեցության ենթակա անձ, ով օգտագործում է ազդեցության ենթակա գյուղատնտեսական հողը կամ գույքը ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով, բանավոր համաձայնության հիման վրա, որը գրավոր կերպով հաստատվում է սեփականատիրոջ կողմից (տեղեկանքի միջոցով ևն):</p>
<p>Հողի օտարում</p>	<p>Գործընթաց, որն ուղղված է ՀՀ կառավարության որոշմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված հողի կամ դրա մի մասի (և դրան ամրակցված անշարժ գույքի, գույքային իրավունքների և այլն) օտարումը հասարակության և պետության կարիքների համար՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:</p>
<p>Մարզ-Համայնք</p>	<p>Հայաստանի Հանրապետությունը բաժանված է 10 մարզերի: Մարզերից յուրաքանչյուրը ղեկավարվում է մարզպետի կողմից, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Յուրաքանչյուր մարզ բաղկացած է</p>

	<p>համայնքներից, որոնք ինքնակառավարվող են և բաղկացած են մեկ կամ ավելի բնակավայրերից: Բնակավայրերը դասակարգվում են որպես քաղաք կամ որպես գյուղ: 2007 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կա 915 համայնք, որոնցից 49-ը համարվում են քաղաքային և 866-ը՝ գյուղական: Երևանը, որը նախկինում մարզի կարգավիճակ ուներ, ներկայումս ունի համայնքի կարգավիճակ և դեկլարվում է ընտրովի քաղաքապետի կողմից:</p>
<p>Տարաբնակեցում</p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում ԱԵԱ-ների սեփականության և/կամ կենսամակարդակի վրա բացասական ազդեցությունը մեղմացնելու համար նախատեսված բոլոր միջոցառումները, ներառյալ՝ փոխհատուցում, վերաբնակեցում (անհրաժեշտության դեպքում) և հանրային գույքի վերականգնում:</p>
<p>Տարաբնակեցման պլան</p>	<p>Գործողությունների ժամանակացույց՝ տարաբնակեցման ռազմավարությունը, նպատակները, իրավունքները, գործողությունները, պարտավորությունները, մոնիտորինգը և գնահատումը հստակեցնող բյուջեի բաշխմամբ:</p>

Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. Ծրագրի պատմությունը

1. Ասիական Զարգացման բանկը (ԱԶԲ) համաձայնել է Բազմափուլային ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանը (ՀԿ) տրամադրել 500 միլիոն ամերիկյան դոլար Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագրի) ֆինանսավորման համար: Նախնական փուլը, որը ներառում է Երևանով Արարատ-Աշտարակ և Թալին-Գյումրի ճանապարհահատվածների միջև ընկած երթուղին, բաժանված է երեք ծրագրերի: Սույն Համալիր ստուգման արդյունքների հաշվետվության (ՀՄԱՀ) առարկան **Մարմարաշեն համայնքի կմ 15+439-ում և Բուրաստան համայնքի կմ 24+147-ում երկու նոր ուղեանցների կառուցումն է**, որը նշվում է որպես Տրանշ 1 (Տ1. Մարմարաշեն և Բուրաստան), այսուհետ՝ Ծրագիր: ՀՄԱ հաշվետվությունը, որը մշակվել է Ծրագրի գործադիր մարմին (ԳՄ) հանդիսացող ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ) կողմից, կհաստատվի ԱԶԲ-ի կողմից և կդառնա պայման Ծրագրի իրականացման համար:
2. Նախքան սույն ՀՄԱՀ-ը մշակելը, 2014 թ.-ին պատրաստվեց ՀՕՏԾ-ի նախնական տարբերակը, որը ներառում էր հին նախագիծը, որն էլ տվյալ պահին հանդիսանում էր նախնական ծրագրի շրջանակը: Հաշվի առնելով այն փաստը, որ հաստատված նախնական Տրանշ 1-ը, համաձայն ԱԶԲ ուղեցույցների, դասակարգվել է որպես «C» ծրագիր, և, հետևելով հնարավոր ազդեցության ենթակա անձանց և տնային տնտեսությունների (ԱԵԱ/ԱԵՏՏ) վրա ծրագրի ազդեցությունների նվազեցման սկզբունքին, վերանայվեց նախնական ծրագիրը, փոփոխության ենթարկվեց նախագիծը, որի արդյունքում վերափոխված ծրագիրն ազդում է միայն համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների վրա:¹ Այսպիսով՝ ծրագրի հետևանքով չեն առաջանում հողի օտարման և տարաբնակեցման հարցեր, քանի որ համայնքները, հանդիսանալով ուղղակի շահառուներ, պատրաստակամ են համայնքային հողակտորները կամավոր հատկացնելու ուղեանցների կառուցման համար:

II. Ծրագրի շրջանակը

3. Ծրագիրը բաղկացած է Մարմարաշեն համայնքի 15+439 կմ-ում և Բուրաստան համայնքի 24+147 կմ-ում երկու նոր ուղեանցների կառուցումից: Գլուխ Գ-ում ներառված քարտեզներ 1 և 2-

¹ Համաձայն ԱԶԲ-ի Գործառնական ձեռնարկի, 2009 թ. (ADB Operation Manual (OM) F1/OP (2009))՝ ծրագիրը դասակարգվում է «Ա» խմբում, եթե ավելի քան 200 անձինք կրում են զգալի ազդեցություն (վերաբնակեցում կամ եկամուտ բերող գույքի ավելի քան 10%-ի կորուստ): Ծրագիրը դասակարգվում է «Բ» խմբում, եթե զգալի ազդեցության են ենթարկվում 200-ից պակաս թվով անձինք: «Գ» կատեգորիայի ծրագրերը ՀՕՏ ազդեցություններ չեն կրում:

ը ցույց են տալիս Ծրագրի տեղակայվածությունը՝ ըստ նախագծի նախնական և վերջնական տարբերակների:

III. Ինչպես առաջ եկավ հողի կամավոր նվիրաբերության անհրաժեշտությունը

4. ԾԻԿ-ի մասնագետների, Մարմարաշեն և Բուրաստան համայնքների ղեկավարների և ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած մի քանի քննարկումների ընթացքում ԾԻԿ-ը համայնքներին տեղեկացրեց, որ նոր ուղեանցների կառուցման ծրագրի հետևանքով մի քանի սեփական և համայնքային հողակտորներ կարող են ազդեցության ենթարկվել և հողի օտարման ու տարաբնակեցման հարցեր առաջացնել: Ուստի, համայնքների ղեկավարներին տեղեկացրեցին, որ այդ դեպքում պետք է մշակվի հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր, և ԱԵԱ/ԱԵՏՏ-ների կորուստները (օտարման ենթակա գույքերը՝ ներառյալ համայնքի սեփականությունը հանդիսացող հողատարածքները) պետք է փոխհատուցվեն: Մինևույն ժամանակ ենթադրվում էր, որ այս ՀՕՏ ազդեցությունները ենթակա չեն ծրագրի ֆինանսավորմանը, հետևաբար, պետք է դուրս մղվեն ծրագրից:²
5. Համապատասխան համայնքների վարչակազմերն իրենց պատրաստակամությունը հայտնեցին Մարմարաշեն և Բուրաստան համայնքների նոր ուղեանցների նախագծի հետևանքով ազդեցության ենթակա համայնքային սեփականություն հանդիսացող հողակտորները նվիրաբերելու Հայաստանի Հանրապետությանը ուղեանցների կառուցման նպատակով:
6. Մինևույն ժամանակ որոշվեց խուսափել մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի և ԱԵԱ/ԱԵՏՏ-ների վրա ազդեցություններից: Այդ ազդեցությունների նվազեցման և մեղմացման միջոցառումները նկարագրված են Գլուխ Գ-ում:

IV. Համալիր ստուգման արդյունքների հաշվետվության նպատակն ու շրջանակը

7. Սույն հաշվետվությունը պատրաստվել է Մարմարաշեն և Բուրաստան համայնքների երկու նոր ուղեանցների համար, որն անվանվել էՏրանշ1. Մարմարաշեն և Բուրաստան, և այսուհետ՝ Ծրագիր, և նկարագրում է Ծրագրի ազդեցությունների դիտարկման արդյունքները հարկադիր տարաբնակեցման տեսանկյունից և դրանց համապատասխանությունը ԱԶԲ անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ 2009) պահանջներին:

² Համաձայն Տրանշ 1-ի Վարկային համաձայնագրի (Վարկային համար՝ 2561-ARM (SF) հոկտ. 12, 2009)՝ ՀՕՏ ազդեցություններ նախատեսված չեն. Ծրագիրը դասակարգվել էր «C» խմբում հարկադիր տարաբնակեցման պատճառով՝ հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները կներառեն գոյություն ունեցող չորս երթևեկության գոտիներով մայրուղու բարելավումը և կիրականացվեն գոյություն ունեցող օտարման գոտում կամ պետության սեփականությունը հանդիսացող չօգտագործվող հողատարածքում: Այսպիսով՝ համապատասխան բյուջե առկա չէ/չի նախատեսվել ՀՕՏ հետ կապված հարցերի համար:

**Բ. ՀՈՂԻ ԿԱՄԱՎՈՐ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

I. Ոչ հարկադիր տարաբնակեցում

8. Ոչ հարկադիր (կամավոր) տարաբնակեցումը վերաբերում է գերակա հանրային շահի շրջանակներից դուրս ցանկացած տարաբնակեցմանը կամ պետական մարմինների իրավասությամբ ապահովվող հողի օտարման այլ ձևերին: Կամավոր տարաբնակեցման կարևոր սկզբունքներն են տեղեկացված համաձայնությունը և ընտրության ուժը/իրավունքը: Տեղեկացված համաձայնությունն այն է, երբ տվյալ անձը լիովին իրազեկված է ծրագրի և ծրագրի ազդեցությունների ու հետևանքների մասին և համաձայն է մասնակից դառնալ դրան: Ընտրության ուժ/իրավունք ասելով՝ նկատի ունենք, որ տվյալ անձն ունի հողի օտարման հետ համաձայնելու կամ չհամաձայնելու իրավունք, առանց պետության կողմից պաշտոնապես, կամ ո ոչ պաշտոնապես անբարենպաստ հետևանքների պարտադրման: ԱՔՀ պահանջները կիրառելի չեն ոչ հարկադիր (կամավոր) տարաբնակեցման դեպքում:

II. Հողի կամավոր նվիրաբերություն. Չափանիշներ և պայմաններ

9. Անվտանգության երաշխիքների դասակարգումների տեսանկյունից Ծրագիրը հարկադիր տարաբնակեցման ազդեցության պատճառով դասակարգվում է «C» խմբում: Այսպիսով, այս դեպքում ՀՍԱՀ է պատրաստվում՝ ցույց տալու համար, որ համայնքի վարչակազմը տեղեկացված է, որ իրենք իրավասու են փոխհատուցում ստանալու և համայնքային հողը կամավոր նվիրաբերում են համայնքի ընդհանուր շահի համար, որը գերակա է հողի նվիրաբերության նկատմամբ:
10. Համաձայն ԱԶԲ-ի՝ *Հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ձեռնարկի*³, հողի կամավոր նվիրաբերությունը, սովորաբար, անհատների կողմից հողի կամավոր հատկացումն է համայնքի շահերից բխող ծրագրերի համար, ինչպիսիք են՝ դպրոցը կամ առողջապահական կենտրոնը: Օրինակ՝ նույնիսկ համայնքի զարգացմանը նպաստող գյուղական ճանապարհները կառուցվում են հողի նվիրաբերությամբ՝ կամավոր հատկացմամբ: Հիմնական գաղափարն այն է, որ ծրագրի առավելությունները փաստացիորեն ավելին են, քան՝ նվիրաբերված հողատարածքը: Հողի նվիրաբերության դեպքում հանրային գերակա շահը կամ այլ պետական մարմինները չպետք է ներգրավված լինեն օտարման գործընթացում: Հետևաբար, հողի կամավոր նվիրաբերությունը ԱՔՀ-ի շրջանակներից դուրս է:
11. Այնուամենայնիվ, ինչպես ներկայացված է ԱԶԲ-ի ձեռնարկում, ծրագրի աշխատանքային խումբը պետք է նման դեպքերում որոշում կայացնի և համալիր ստուգում անցկացնի՝

³ Հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ-ի ձեռնարկ, 2012 թ., նոյեմբեր
<http://www.adb.org/documents/involuntary-resettlement-safeguards-planning-and-implementation-good-practice-sourcebook-d>)

ազդեցության ենթակա անձանց և ԱԶԲ-ի հեղինակության վրա անբարենպաստ ազդեցությունները կանխելու համար: Ծրագրի աշխատանքային խումբը պետք է (i) ստուգի, թե արդյոք նվիրաբերությունն իրականում կամավոր հիմունքներով է և ոչ հարկադրանքի ներքո. աշխատանքային խումբը պետք է ստուգի բանավոր և գրավոր արձանագրությունները և վավերացումները երրորդ անկախ կողմի միջոցով, ինչպիսիք են՝ հատուկ նպատակով նշանակված հասարակական կազմակերպությունը կամ իրավական մարմինը, (ii) ստուգի և հավաստիանա, որ կամավոր նվիրաբերման հետևանքով ազդեցության ենթակա անձանց կենսամակարդակը չի ենթարկվում զգալի ազդեցության, այլ ուղղակիորեն շահում է դրանից:

12. Սովորաբար, հողի կամավոր նվիրաբերումը շահառու տնային տնտեսությունների կամ համայնքների կողմից ընդունելի է համարվում այն դեպքերում, երբ.

- 1) Ազդեցությունները սահմանային են (կորստի տոկոսի և մնացած ակտիվների/գույքերի նվազագույն չափի հիման վրա):
- 2) Ազդեցությունների հետևանքով տնային տնտեսությունները չեն տեղահանվում/տեղափոխվում կամ եկամտի և կենսապահովման միջոցների կորուստ չեն ունենում:
- 3) Կամավոր նվիրաբերություն կատարող տնային տնտեսությունները ուղղակիորեն հանդիսանում են ծրագրի շահառու:
- 4) Նվիրաբերվող հողը գերծ է սեփականության իրավունքի վերաբերյալ անհամաձայնություններից կամ այլ արգելքներից:
- 5) Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների հետ լուումներն իրականացվում են ազատ և թափանցիկ եղանակով,
- 6) Հողի վերաբերյալ գործարքները հիմնավորվում են սեփականության իրավունքի փոխանցումով:
- 7) Պատշաճորեն փաստաթղթավորվում են հանրային լուումների հանդիպումները, բողոքները և ձեռնարկված քայլերը՝ նման բողոքներին անդրադառնալու և հնարավորինս բավարարելու համար:


13. Սույն ծրագրի դեպքում հողի կամավոր նվիրաբերությունը հիմնավորվում է հետևյալ հիմնական պայմանների առկայությամբ՝ (i) Ծրագրի ազդեցությունների հետևանքով տնային տնտեսությունները չեն տեղահանվում/տեղափոխվում և չեն ունենում եկամտի կամ կենսապահովման միջոցների կորուստ, (ii) ազդեցության ենթակա համայնքները հոժարակամություն և պատրաստակամություն են հայտնում ազդեցության ենթարկված համայնքային հողերը Ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու հարցում, որը փաստագրվում է հանրային լուումների հանդիպումների արձանագրություններում: Համապատասխան համայնքները կառավարվում են տեղական մակարդակով և, որպես այդպիսին, նրանց կողմից օգտագործվող հողերը հանդիսանում են ո՛չ մասնավոր սեփականություն, ո՛չ էլ՝ պետական, և կամավոր նվիրաբերության դեպքում տեղի է ունենում սահմանված համայնքային հողակտորների սեփականության իրավունքի փոխանցում Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Գ. ՀՈՂԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ


14. Այս գլխում ներկայացված են ուղեանցների նախնական նախագիծը և ազդեցությունների նվազեցման նպատակով հետազայում կատարված նախագծային փոփոխությունները:
15. Համաձայն նախնական ՀՕՏ-ի պատրաստման շրջանակում 2014 թ. սեպտեմբերին իրականացված հողի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) նախնական գնահատման, ելնելով ուղեանցների նախնական նախագծից՝ պարզվեց, որ Ծրագրի արդյունքում հնարավոր է մշտապես օտարվի 26.652,05 մ² մակերեսով 52 հողակտոր: Դրա արդյունքում 2 համայնքում կարող էին ազդեցության ենթարկվել 24 տնային տնտեսություն: Հողի օտարման հետ միասին 236,40մ² (4 կառույց) մակերեսով շինություն կարող էր ենթարկվել ապամոնտաժման, որի հետևանքով 4 ձեռնարկատիրական գործունեություն ենթակա կլինեին տեղափոխման: Ունենալով ոչ զգալի ՀՕՏ ազդեցություններ՝ Ծրագիրը կարող էր դասակարգվել «B» խմբում՝ համաձայն ԱԶԲ ուղեցույցների:
16. Հիմն ընդունելով այդ բացահայտումները՝ որոշում ընդունվեց իրականացնել ուսումնասիրություն այդ ազդեցությունները կանխելու կամ նվազեցնելու նպատակով: Սույն առաջադրանքն իրականացվեց՝ նախագծողների, ԾԻԿ-ի և Մարմարաշեն և Բուրաստան համայնքների ներկայացուցիչների հետ սերտ համագործակցությամբ և փոխհամաձայնությամբ:
17. Այսպիսով, ազդեցությունների նվազեցման նպատակով իրականացվեցին հետևյալ քայլերը. ուսումնասիրվեցին յուրաքանչյուր համայնքի կադաստրային քարտեզները՝ պարզելու համար, թե արդյոք մասնավոր սեփականություն հանդիսացող կամ օգտագործվող հողերը համընկնում/փոխհատվում են ուղեանցների նախնական նախագծի հետ: Հետազոտության և չափագրումների հիման վրա դաշտում ստուգվեցին նաև կադաստրային քարտեզները (որտեղ կիրառելի էր): Մի քանի տեղամասային այցելություններ կատարվեցին համայնքների ներկայացուցիչների, ԾԻԿ-ի և նախագծողի մասնակցությամբ՝ առավել նպատակահարմար լուծումները գտնելու նպատակով: Արդյունքում, վերանայված նախագծում հնարավոր եղավ խուսափել մասնավոր սեփականություն հանդիսացող և օգտագործվող հողերի/շինությունների վրա ազդեցությունից: Վերջնական վերանայված նախագծերը ներկայացվեցին, դիտարկվեցին և համաձայնեցվեցին համայնքի ղեկավարների հետ:
18. Ստորև Քարտեզներ 1 և 2-ում ներկայացված են ուղեանցների նախնական և վերջնական վերանայված նախագծերի համեմատական քարտեզները::

Քարտեզ 1. Մարմարաշեն համայնքում կառուցվող նոր ուղեանցի նախնական և վերջնական նախագծերը (կմ 15+439)

Նախնական նախագիծ



Վերջնական նախագիծ



Դ. ԿԱՄԱՎՈՐ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

19. Ուղեանցների նախագծային փոփոխությունների շնորհիվ ոչ մի մասնավոր սեփականություն հանդիսացող հող կամ անձ/տնային տնտեսություն այլևս չի ենթարկվում ազդեցության, և ծրագրի օտարման գոտում մնում են միայն համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերը: Ելնելով ՀՄԱՀ-ում ներկայացված փաստաթղթերից՝ Ծրագիրը դասակարգվում է ՀՏ ազդեցության «C» խմբում՝ ազդեցության ենթակա համայնքային հողերի կամավոր նվիրաբերության վերաբերյալ համաձայնեցված ընթացակարգի հիման վրա:
20. Ծրագրի ազդեցությունները բացահայտելու նպատակով նախագծման խորհրդատուի կողմից իրականացվեց ազդեցության ենթակա հողերի փաստացի չափագրում վերջնական վերանայված նախագծի հիման վրա, և այդ հողակտորների համար մշակվեցին համապատասխան հատակագծեր՝ համաձայն ԱԳԿՊԿ-ի պահանջների:
21. Բացի այն, որ նախագծային փոփոխությունների շնորհիվ հնարավոր դարձավ խուսափել ազդեցություններից, Մարմարաշեն համայնքում չափագրումների արդյունքում ի հայտ եկան կադաստրային անհամապատասխանություններ. ըստ կադաստրային քարտեզների, ազդեցության են ենթարկվում մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորները, որոնք, չափագրումների արդյունքների համաձայն, փաստացիորեն ազդեցության չեն ենթարկվում: Այսպիսով, ԾԻԿ-ի կողմից նախաձեռնվեցին մի քանի հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների և կադաստրի մասնագետների մասնակցությամբ՝ իրավիճակը և կադաստրային տվյալների ուղղումների հնարավոր տարբերակները քննարկելու նպատակով: Այդ հանդիպումների արդյունքում փոխհամաձայնեցված կերպով մշակվեց և իրականացվեց կադաստրային տվյալների ուղղումների գործողության պլան.
- 1) Նախագծման խորհրդատուի կողմից յուրաքանչյուր համայնքի համար մշակվեցին փաստացի չափագրման համապատասխան հատակագծեր և տրամադրվեցին համայնքների ղեկավարներին:
 - 2) Համայնքների ղեկավարները դիմեցին տարածքային ԱԳԿՊԿ-ներ՝ համաձայն ՀՀ օրենսդրության իրենց համայնքերում փաստացի չափագրման հատակագծերի հիման վրա կադաստրային քարտեզների ուղղման պահանջով:
 - 3) ԱԳԿՊԿ-ն ուղղեց կադաստրային քարտեզները:
 - 4) Նախագծման խորհրդատուն ուղղված կադաստրային քարտեզների հիման վրա մշակեց համապատասխան հատակագծերը:
22. Ընդհանուր առմամբ Ծրագրի հետևանքով ազդեցության են ենթարկվում 17 (14,264.88մ²) և 15 (9,595.76մ²) համայնքային սեփականության հողակտորներ Մարմարաշեն և Բուրաստան համայնքներում: Համայնքային հողերի ծավալի վերաբերյալ նման անհրաժեշտությունը համեմատաբար փոքր է՝ 5.9 ակր կամ 2.4 հեկտար: Ուղեանցների վերջնական նախագծի հիման վրա հողերի վրա ազդեցություններն ամփոփ ներկայացված են Աղյուսակ 1-ում, իսկ ազդեցությունների վերաբերյալ մանրամասները՝ Հավելված 1-ում:

Աղյուսակ 1. Ծրագրի տարածքում ազդեցության ենթակա հողակտորների քանակը

No	Համայնք	Ազդեցության ենթակա համայնքային հողակտորներ		Պետական հողակտորներ		Ընդամենը	
		Հողակտորների քանակը	Մակերեսը (մ ²)	Հողակտորների քանակը	Մակերեսը (մ ²)	Հողակտորների քանակը	Մակերեսը (մ ²)
1	Մարմարաշեն	17	14,264.88	2	688.20	19	14,953.08
2	Բուրաստան	15	9,595.76	3	382.25	18	9,978.01
	Ընդամենը	32	23,860.64	5	1,070.45	37	24,931.09

Ե. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ

23. Մարմարաշեն և Բուրաստան համայնքներում ուղեանցների նախնական և վերջնական նախագծման ընթացքում մի քանի փուլերով տեղի ունեցան քննարկումներ և հանրային լուսումներ: Նախքան ծրագրի նախագծումը, ինչպես նաև նախագծման ընթացքում համայնքների ղեկավարների և մարզպետարանի ներկայացուցիչների հետ կազմակերպվեց մի քանի հանդիպում՝ համայնքների բոլոր պահանջներին անդրադառնալու նպատակով:
24. Հանրային լուսումների հանդիպումները տեղի ունեցան Մարմարաշեն և Բուրաստան համայնքներում ԾԻԿ-ի ներկայացուցիչների և ԱԶԲ-ի բնապահպանության մասնագետի մասնակցությամբ: Լուսումների ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին նոր ուղեանցների նախագծերը, ինչպես նաև համապատասխան բնապահպանական և սոցիալական ազդեցությունները:
25. Բոլոր շահառուների ներկայությունն ապահովելու համար գյուղերի համայնքների ղեկավարների և այլ շահառուների հետ նախնական համաձայնություն էր ձեռք բերվել: Հանրային լուսումները կազմակերպելիս երկու համայնքներում էլ հատուկ ուշադրություն դարձրեցին ուղեանցներին ավելի մոտ բնակվող բնակիչների մասնակցությանը⁴: Տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՍ) աջակցեցին նրանց մասնակցությունն ապահովելու գործում:

⁴ Կան մի քանի շենքեր, որոնք գտնվում են նոր ուղեանցներից 5-20 մ հեռավորության վրա: Այդ շենքերի սեփականատերերը/օգտագործողները տեղյակ են ուղեանցների կառուցման մասին և չունեն առարկություններ: Միևնույն ժամանակ, այդ շենքերը հիմնականում նորակառույց են և գտնվում են լավ վիճակում, հետևաբար, ենթադրվում է, որ շինարարության ընթացքում ոչ մի խնդիր չի առաջանա:

26. Բուրաստան համայնքում հանրային լսումը կազմակերպվեց 2015 թ. մայիսի 21-ին : Հանդիպման ընթացքում տեղի բնակչությունը ցուցաբերեց ակտիվ մասնակցություն: Հանդիպմանը մասնակցում էին 25 հոգի, այդ թվում նաև ԱԶԲ-ի, ԾԻԿ-ի ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի ղեկավարը, վարչական կենտրոնի անձնակազմը, մշակութային կենտրոնի տնօրենը և այլ բնակիչներ:
27. 2015 թ. մայիսի 27-ին հանրային լսում կազմակերպվեց Մարմարաշեն համայնքի գյուղապետարանում, որտեղ ներկա էին համայնքի ղեկավարը, գյուղապետարանի աշխատակազմը, խորհրդի ներկայացուցիչները, թոշակառուներն ու այլ բնակիչներ՝ ներառյալ ԱԶԲ-ի և ԾԻԿ-ի ներկայացուցիչները:
28. Ուղեանցների շինարարության համար մտահոգվող մարդիկ ակտիվ մասնակցություն էին հանդես բերում: Հավելված 2-ում ներկայացված են մասնակիցների անվանացանկն ու ՀԼ-երի լուսանկարները:
29. Հանդիպումների ընթացքում ներկայացվեցին մանրամասն նախագիծն ու աշխատանքները: Համայնքների ղեկավարները նշեցին, որ ուղեանցների կառուցումը խիստ կարևոր է համայնքների կենսամակարդակի և գյուղատնտեսական զարգացման համար, ինչպես նաև նշեցին այն փաստը, որ իրենց բոլոր գյուղատնտեսական հողերը տեղակայված են համայնքների մյուս կողմում, և նոր ուղեանցների կառուցման շնորհիվ նրանք կկարողանան անցնել ճանապարհը հողերի մշակման և անասնապահության համար: Մասնակիցները նշեցին, որ համայնքները պատրաստակամ են ազդեցության ենթակա հողերը նվիրաբերելու ուղեանցների կառուցման համար, ինչպես նախապես համաձայնեցված էր համայնքների ղեկավարների հետ:
30. ԾԻԿ-ի բնապահպանության մասնագետը տեղեկացրեց հնարավոր բնապահպանական բացասական ազդեցությունների մասին, որոնք ամփոփ ներկայացված են ՏԲԿՊ-ում: ՏԲԿՊ-ն նկարագրում է շրջակա միջավայրի, բնակչության առողջության և շինարարության ընթացքում աշխատողների անվտանգության վրա բացասական ազդեցությունները, որոնք կարող են ի հայտ գալ ծրագրի իրականացման ընթացքում՝ նախագծման, շինարարության և շահագործման փուլերում: Ներկայացվեց նաև այդ հնարավոր բացասական ազդեցությունները մեղմացնող կամ կանխարգելող միջոցառումների ցանկը:
31. Համայնքի բնակիչները հիմնականում մտահոգված էին շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ եկող հետևյալ հնարավոր խնդիրների մասին.
- երբ է սկսվելու շինարարությունը և որքան է այն տևելու,
 - շինարարական աշխատանքների ընթացքում ինչպես են բնակիչներն անցնելու ճանապարհը,
 - շինարարական աշխատանքների ընթացքում ինչպես է կազմակերպվելու անասունների անցումը,
 - շինարարական աշխատանքների հետևանքով բնակավայրերի աղտոտվածությունն ու կենցաղային թափոնների առկայությունը:

32. Բնապահպանական կառավարման պլանի վերջնական տարբերակի օրինակները կտրամադրվեն երկու համայնքների վարչական կենտրոններին:
33. Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղի բնակիչների մտահոգությունները, բողոքները և դժգոհությունները ստանալու և դրանց լուծմանը խթանելու նպատակով կհաստատվի Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ), որի միջոցով կանդրադառնան ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկող բոլոր բողոքներին: ԲԼՄ-ն կձևավորվի շինարարական ողջ փուլի համար, տեղական ղեկավար մարմինների հետ համագործակցությամբ: Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը Կապալառուն շահառուներին կտեղեկացնի բողոքների լուծման մեխանիզմի մասին և կտրամադրի բողոքների հավաքման ու արձագանքման համար համայնքում պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները:
34. Ազդեցության ենթակա անձանց և այլ շահագրգիռ կողմերի՝ ներառյալ տեղի բնակիչների հետ անցկացվող լսումները շինարարության ընթացքում կունենան շարունակական բնույթ՝ ապահովելու համար համապատասխան և բավարար տեղեկատվության հրապարակումը, որը հասանելի և մատչելի կլինի ազդեցության ենթակա անձանց համար և ուղղված կլինի անբարենպաստ վիճակում գտնվող և խոցելի խմբերի կարիքներին/պահանջներին: Ազդեցության ենթակա անձանց և այլ շահառուների բոլոր համապատասխան տեսակետները պետք է ներառված լինեն մեղմացնող միջոցառումների մեջ:

Զ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

35. Տրանսպորտի և կապի նախարարությունը (ՏԿՆ) Ծրագրի գործադիր մարմինն է (ԳՄ), իսկ ԾԻԿ-ը՝ իրականացնող մարմինը (ԻՄ): ԾԻԿ-ն ունի իրավական և արտաքին ազդեցության աշխատանքային խումբ, որը պատասխանատու է ծրագրի ՀՕՏ-ի հետ կապված գործողությունների իրականացման համար: Աշխատանքային խումբը բաղկացած է հետևյալ մասնագետներից և խորհրդատուներից՝ իրավական և արտաքին ազդեցության ղեկավար, արտաքին ազդեցության և տարաբնակեցման համակարգող, սոցիալական զարգացման և տարաբնակեցման մասնագետ, բնապահպանության և հնագիտության մասնագետ, իրավական հարաբերությունների խորհրդատու և բողոքների և վեճերի կառավարման մասնագետ, դաշտային աշխատանքների ազգային համակարգող (խորհրդատու) և ՀՕՏ իրավական մասնագետ (խորհրդատու) (այսուհետ՝ կամավոր նվիրաբերության համակարգման խումբ՝ ԿՆՀԽ):
36. ԿՆՀԽ-ն կիրականացնի համայնքային հողերի կամավոր նվիրաբերության գործողությունների պլանը ՀՄԱՀ-ում սահմանված ընթացակարգերի հիման վրա:
37. Մի շարք այլ պետական գործակալություններ ևս կարևոր դեր են խաղում կամավոր նվիրաբերության գործընթացի իրականացման հարցում: Տարածքային կառավարման վարչակազմերը ակտիվորեն ներգրավված են կամավոր նվիրաբերության գործընթացի իրականացման և համայնքային հողերի նպատակային նշանակության փոփոխության հարցերում: Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և

դրա կադաստրային տարածքային գրասենյակները պատասխանատու են սեփականության իրավունքի գրանցման համար:

38. Համայնքային հողերի կամավոր նվիրաբերության ընթացքում բոլոր անհրաժեշտ վարչական ծախսերը կհոգան համայնքները՝ բացառությամբ ՀՀ-ի անունով սեփականության իրավունքի պետական գրանցման ծախսերի (թե՛ կադաստրային, թե՛ նոտարական), որոնք կվճարվեն ՀՀ կառավարության կողմից:
39. Համայնքային հողերի կամավոր նվիրաբերության գործողությունների պլանի իրականացումը ենթակա է ստուգման Երրորդ անկախ կողմի (ԵԱԿ) կողմից, որը կպատրաստի Համապատասխանության Հաշվետվություն ԱԶԲ-ի հաստատմանը ներկայացնելու համար:
40. Ներգրավված կողմերի հիմնական ցանկը և նրանց պատասխանատվությունների մանրամասն նկարագրությունը ներկայացված են ստորև համայնքային հողերի կամավոր նվիրաբերության գործողությունների պլանում.

Աղյուսակ 2. Համայնքային հողերի կամավոր նվիրաբերության գործողությունների պլան

No	Գործողություն	Պատասխանատու կողմ	Ժամանակացույց
ՀՄԱՀ-ի պատրաստում և հաստատում			
1	ՀՄԱՀ-ի նախնական տարբերակի մշակում	Նախագծման խորհրդատու	Ավարտված
2	ՀՄԱՀ –ի վերջնականացում ԾԻԿ-ի և ԱԶԲ-ի մեկնաբանությունների հիման վրա	ԱԶԲ/ԾԻԿ	Հունիս 05, 2016
3	ՀՄԱՀ-ի հաստատում	ԱԶԲ	Հունիս 10, 2016
4	ԵԱԿ ներգրավվում՝ հողերի կամավոր նվիրաբերության ստուգման նպատակով	ԾԻԿ	Հունիս-հուլիս 2016
Համայնքային հողերի կամավոր նվիրաբերության իրականացում			
5	Համայնքների ավագանիների որոշումները համայնքային հողերի նվիրաբերության վերաբերյալ (թե՛ Մարմարաշենի, թե՛ Բուրաստանի համար)	Մարմարաշեն և Բուրաստան համայնքներ	Ավարտված
6	Ազդեցության ենթակա համայնքային հողերի նպատակային նշանակության փոփոխությունը տրանսպորտային նշանակության	Մարմարաշեն և Բուրաստան համայնքներ, Արարատի մարզպետարան	Ընթացքի մեջ է, կավարտվի 2016 թ.-ի հունիսի վերջին
7	Ազդեցության ենթակա պետական հողերի նպատակային նշանակության փոփոխությունը տրանսպորտային նշանակության (որտեղ	ԾԻԿ/ՏԿՆ	Հունիս-հուլիս 2016

No .	Գործողություն	Պատասխանատու կողմ	Ժամանակացույց
	անհրաժեշտ է)		
8	Կառավարության որոշման (ԿՈ) ընդունում համայնքային հողերի նվիրաբերության վերաբերյալ	ԾԻԿ/ՏԿՆ	Ապրիլ, 2016
9	Համայնքային հողերի նվիրաբերության վերաբերյալ Կառավարության որոշման հաստատում	ՀՀ կառավարություն	Հուլիս, 2016
10	Համայնքային հողերի նվիրաբերություն. Նվիրաբերության վերաբերյալ պայմանագրերի ստորագրում և նվիրաբերված հողերի նկատմամբ ՀՀ իրավունքների պետական գրանցում	Մարմարաշեն և Բուրաստան համայնքներ/ԾԻԿ	Հուլիս-օգոստոս, 2016
11	Հողերի կամավոր նվիրաբերության ստուգումը ԵԱԿ կողմից և Համապատասխանության հաշվետվության պատրաստում	Երրորդ անկախ կողմ	Օգոստոս-սեպտեմբեր, 2016
12	Համապատասխանության հաշվետվության հաստատում	ԱԶԲ/ԾԻԿ	Սեպտեմբեր, 2016

Է. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Կատարվել է հարկադիր տարաբնակեցման ազդեցությունների ուսումնասիրություն համալիր ստուգումն իրականացնելու նպատակով.
- 2) Ծրագիրը ներառում է ֆիզիկական շինարարական աշխատանքներ: Առաջարկվող գործունեությունը ենթադրում է Մարմարաշեն և Բուրաստան համայնքներում երկու նոր ուղեանցների կառուցում: Ուղեանցների նախագծի նախնական տարբերակը ենթարկվել է՝ փոփոխության որևէ անձի կամ տնային տնտեսության կողմից օգտագործվող և մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով:
- 3) Այդ գործողությունների արդյունքում չի պահանջվի հողի մշտական կամ ժամանակավոր օտարում՝ անկախ հողի սեփականության կարգավիճակից և ընթացիկ օգտագործման ձևից: Ծրագրի հետևանքով ազդեցության են ենթարկվում միայն համայնքային սեփականություն հանդիսացող հողեր, որոնք կամավոր սկզբունքով կհատկացվեն ՀՀ-ին ուղեանցների կառուցման նպատակով: Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական ունեցող կամ չունեցող որևէ անձ չի բնակվում կամ աշխատում աշխատանքային տեղամասում կամ ազդեցության միջանցքում: Գյուղատնտեսական հողակտորների, ձեռնարկատիրական գործունեությունների, ձեռնարկությունների, տների, ինչպես նաև մշակաբույսերի, ծառերի և այլ ամրակայված գույքերի (ինչպիսիք են՝

ցանկապատեր, պոմպեր և այլն) կորուստ չի լինի, հետևաբար, չի լինի նաև եկամտի կամ կենսապահովման միջոցի կորուստ: Հողի օգտագործման հետ կապված փոփոխությունների պատճառով ազդեցության չի ենթարկվելու որևէ սոցիալական/տնտեսական գործունեություն: Ոչ ոք չի ունենալու բնական ռեսուրսների, հաղորդողիների կամ շենքերի մուտքի կորուստ:

- 4) Ծրագիրը դասակարգվում է «C» խմբում, քանի որ այն չունի հարկադիր տարաբնակեցման ազդեցություններ:
- 5) Մշակվել է համայնքային հողերի կամավոր նվիրաբերության գործողությունների պլանը, որը կիրականացվի ԾԻԿ/ՏԿՆ-ի կողմից՝ սերտորեն համագործակցելով համայնքների հետ: Երրորդ անկախ կողմը կստուգի և մոնիտորինգի կենթարկի համայնքային հողերի կամավոր նվիրաբերությունը և պատրաստված Համապատասխանության հաշվետվությունը կներկայացվի ԱԶԲ-ի հաստատմանը:
- 6) Հանրային լուսմներ տեղի ունեցան Մարմարաշեն և Բուրաստան համայնքներում տեղի բնակիչների և տեղական ղեկավար մարմինների մասնակցությամբ, որտեղ ներկայացվեցին Ծրագիրը և շինարարության ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվող համապատասխան սոցիալական և բնապահպանական միջոցառումները:
- 7) Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղի բնակիչների մտահոգությունները, բողոքները և դժգոհությունները ստանալու և դրանց լուծմանը խթանելու նպատակով տեղական ղեկավար մարմինների հետ համագործակցությամբ կձևավորվի Բողոքների լուծման մեխանիզմ (ԲԼՄ):

Հավելված 1. Ազդեցության ենթակա հողակտորների ցանկը

No	Համայնք	Կադաստրային ծածկագիրը	Մեփականության իրավունքի սուբյեկտը՝ ըստ կադաստրային քարտեզի*	Հողի նպատակային նշանակությունը*, **	Հողի գործառնական նշանակությունը*	Հողի ընդհանուր մակերեսը՝ ըստ կադաստրի (մ²)*	Հողի ազդեցության ենթակա մակերեսը (մ²)***	Մեկնաբանություններ
Մարմարաշեն Համայնք								
1	Մարմարաշեն	03-058-0202-0026	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	1,442.00	91.40	-
2	Մարմարաշեն	03-058-0202-0027	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	1,652.00	173.20	-
3	Մարմարաշեն	03-058-0202-0028	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	4,888.00	780.10	-
4	Մարմարաշեն	03-058-0202-0037	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	500.00	500.00	Ամբողջությամբ ազդեցության ենթակա
5	Մարմարաշեն	03-058-0420-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	2,236.00	1,298.80	-
6	Մարմարաշեն	03-058-0203-0007	Համայնքային	Գյուղատնտեսական	Արոտավայր	4,259.00	1,989.08	Ազդեցության ենթակա՝ երկու մասով.
7	Մարմարաշեն	03-058-0203-0012	Համայնքային	Գյուղատնտեսական	Արոտավայր	600.00	360.70	-
8	Մարմարաշեն	03-058-0203-0009	Հայաստանի Հանրապետություն	Ջրային հողեր	Հիդրոտեխ, ջրային, տնտ. և այլ նպատակներ	675.00	68.20	-
9	Մարմարաշեն	03-058-0203-0008	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	2,848.00	308.60	-
10	Մարմարաշեն	03-058-0421-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	5,559.00	4,686.10	-

No	Համայնք	Կադաստրային ծածկագիրը	Մեփականության իրավունքի սուբյեկտը՝ ըստ կադաստրային քարտեզի*	Հողի նպատակային նշանակությունը*, **	Հողի գործառնական նշանակությունը*	Հողի ընդհանուր մակերեսը՝ ըստ կադաստրի (մ²)*	Հողի ազդեցության ենթակա մակերեսը (մ²)***	Մեկնաբանություններ
11	Մարմարաշեն	03-058-0204-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	2,825.00	526.70	-
12	Մարմարաշեն	03-058-0423-0001	Համայնքային	Բնակելի	Ընդհանուր օգտագործման	844.00	755.10	-
13	Մարմարաշեն	03-058-0086-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	1,549.00	325.30	-
14	Մարմարաշեն	03-058-0212-0035	Համայնքային	Բնակելի	Հասարակական	250.00	250.00	Ամբողջությամբ ազդեցության ենթակա
15	Մարմարաշեն	03-058-0448-0001	Համայնքային	Բնակելի	Հասարակական	6,147.00	1,766.40	-
16	Մարմարաշեն	03-058-0238-0003	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	517.00	263.20	-
17	Մարմարաշեն	03-058-0511-0001	Հայաստանի Հանրապետություն	Էներգետ., տրանսպորտ., կապ, առևտր. նշանակության	Տրանսպորտային	90,666.00	620.00	տեղական նշանակության հող, ազդեցության ենթակա է երկու մասով
18	Մարմարաշեն	03-058-0202-0038	-	-	-	-	4.00	-
19	Մարմարաշեն	03-058-0535-0001	-	-	-	-	186.20	-
Ընդամենը							14,953.08	-
Բուրաստան Համայնք								
1	Բուրաստան	03-027-0350-0001	Համայնքային	Ջրային հողեր	Ջրանցք	696.00	1,673.70	-
				Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	6,463.00		-

No	Համայնք	Կադաստրային ծածկագիրը	Մեփականության իրավունքի սուբյեկտը՝ ըստ կադաստրային քարտեզի*	Հողի նպատակային նշանակությունը*, **	Հողի գործառնական նշանակությունը*	Հողի ընդհանուր մակերեսը՝ ըստ կադաստրի (մ ²)*	Հողի ազդեցության ենթակա մակերեսը (մ ²)***	Մեկնաբանություններ
2	Բուրաստան	03-027-0418-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	3,297.00	289.74	Ազդեցության ենթակա է երեք մասով
3	Բուրաստան	03-027-0134-0010	Համայնքային	Ջրային հողեր	Ջրանցք	839.00	99.58	-
				Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	1,672.00		-
4	Բուրաստան	03-027-0134-0011	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	1,342.00	29.55	Ազդեցության ենթակա է երկու մասով
5	Բուրաստան	03-027-0134-0012	Համայնքային	Գյուղատնտեսական	Վարելահող	2,408.00	1,923.90	-
6	Բուրաստան	03-027-0353-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	1,980.00	70.15	-
7	Բուրաստան	03-027-0133-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Վարելահող	1,109.00	545.40	-
8	Բուրաստան	03-027-0135-0018	Համայնքային	Գյուղատնտեսական	Վարելահող	2,360.00	2,005.90	-
9	Բուրաստան	03-027-0323-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	1,793.00	81.42	-
10	Բուրաստան	03-027-0136-0014	Համայնքային	Գյուղատնտեսական	Վարելահող	1,016.00	670.60	-
11	Բուրաստան	03-027-0051-0006	Համայնքային	Բնակելի	Բնակելի	836.00	471.30	-
12	Բուրաստան	03-027-0316-0001	Համայնքային	Գյուղատնտեսական	Այլ նշանակության հողեր	3,372.00	1,514.63	-
13	Բուրաստան	03-027-0135-0016	Համայնքային	Ջրային հողեր	Ջրանցք	1,211.00	49.50	-
14	Բուրաստան	03-027-0321-0001	Հայաստանի Հանրապետություն	Էներգետ., տրանսպորտ., կապ, առևտր. նշանակության	Տրանսպորտային	4,361.00	112.00	Տեղական նշանակության ճանապարհ

No	Համայնք	Կադաստրային ծածկագիրը	Մեփականության իրավունքի սուբյեկտը՝ ըստ կադաստրային քարտեզի*	Հողի նպատակային նշանակությունը*, **	Հողի գործառնական նշանակությունը*	Հողի ընդհանուր մակերեսը՝ ըստ կադաստրի (մ ²)*	Հողի ազդեցության ենթակա մակերեսը (մ ²)***	Մեկնաբանություններ
15	Բուրաստան	03-027-0322-0001	Հայաստանի Հանրապետություն	Էներգետ., տրանսպորտ., կապ, առևտր. նշանակության	Տրանսպորտային	4,739.00	136.50	Տեղական նշանակության ճանապարհ
16	Բուրաստան	03-027-0320-0001	Հայաստանի Հանրապետություն	Էներգետ., տրանսպորտ., կապ, առևտր. նշանակության	Տրանսպորտային	-	133.75	Տեղական նշանակության ճանապարհ
17	Բուրաստան	03-027-0135-0015	-	-	-	-	81.07	-
18	Բուրաստան	03-027-0136-0001	-	-	-	-	89.32	-
Ընդամենը							9,978.01	
<p>* Նշված տվյալները հիմնված են ԱԳԿՊԿ –ի կողմից 29.03.2016-ին տրամադրված տվյալների վրա:</p> <p>** Նպատակային և գործառնական նշանակությունները նշված են ոչ թե փաստացի, այլ կադաստրային տվյալների հիման վրա: Այսինքն, եթե հողը դասակարգված է որպես բնակելի, հասարակական և այլն, դա չի նշանակում, որ այն օգտագործվում է հենց այդ նպատակներով., դա նշանակում է, որ այն կարող է օգտագործվել այդ նպատակներով:</p> <p>Բոլոր համայնքային հողերը կարող են վարձակալության տրվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, սակայն նշված ազդեցության ենթակա համայնքային հողերի վրա որևէ վարձակալություն կամ օգտագործում արձանագրված չէ:</p> <p>*** Նշված տվյալները հիմնված են ուղեանցների վերջնական նախագծերի համաձայն իրականացված փաստացի չափագրումների վրա:</p>								

Հավելված 2. Հանրային լսումների մասնակիցների ցանկերն ու լուսանկարները











ՀՅՈՒՄԻՍ ԶԱՐԱԿ ԸՆԴԱՊԱՐԶԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐՈՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ՏՐԱՆԷ 1

Մարմարաշեն և Բուրաստան համայնքների ուղեանցների նախագծի բնապահպանական կառավարման պլանի և սոցիալական ազդեցությունների հանրային լսման մասնակիցների ցանկ

Մարմարաշեն համայնք

27 մայիսի 2015թ.

N	Անուն ազգանուն	Պաշտոն	E-mail/հեռախոս	ստորագրություն
1	Վահան Մրչյան	Մոյ. ՎՄՏ-ի միջնակարգ Տնօրենի տեղակալ, Բոթորու - կղզի 3.	sona_poghosyan28 @yandex.com	<i>Մրչ</i>
2	Ռեզաբեկ Բաբայան	Բնակավայրի կառավարման և կապի գործակալի տնօրեն	mbabekyan31@ yandex.com	<i>Ռեզաբեկ</i>
3	Օհնիկ Միսախանյան	քաղաքացի		<i>Օհնիկ</i>
4	Նեղոսյան Կարսենյան	Գյուղացու կառավարման և կապի գործակալի տնօրեն	093-20-05-16	<i>Նեղոսյան</i>
5	Սևակ Ավագյան	Գյուղացու կառավարման և կապի գործակալի տնօրեն	093-22-77-83	<i>Սևակ</i>
6	Նարեկ Գևորգյան	Գյուղացու կառավարման և կապի գործակալի տնօրեն	093-20-28-58	<i>Նարեկ</i>
7	Վարդանյան Լուսինյան	հայրապետ	(094) 47-55-86	<i>Վարդ</i>
8	Քանուկ Հարությունյան	առևտրի և կապի գործակալի տնօրեն	առևտրի և կապի գործակալի տնօրեն	<i>Քանուկ</i>
9	Նարեկյան Զորայր	Գյուղացու կառավարման և կապի գործակալի տնօրեն	091 2007 59	<i>Նարեկ</i>
10	Արթուր Մարգարյան	Հյուսիս-հարավ ԾՁ ՄԳ.	afyanga@northsouth.am	<i>Արթուր</i>
11	Արթուր Մարգարյան	Ա.Գ.Կ. ընդհանրական կառավարման	aryedharyan.amul@art @yandex.com	<i>Արթուր</i>
12	Օհան Ալեքսանյան	համայնքի տնօրեն	094-19-02-19	<i>Օհան</i>
13	Վահան Կարսենյան	Գյուղացու կառավարման և կապի գործակալի տնօրեն	093-22-83-82	<i>Վահան</i>
14	Գրանդի Կարսենյան	Բնակիչ	093-90-06-31	<i>Գրանդի</i>
15				
16				

N	Անուն ազգանուն	Պաշտոն	E-mail/հեռախոս	ստորագրություն
16	Կարեն Կարենի Կարենի	Օպերատոր	anna.kachanizyan@son 094 6193 62	
17	Կարեն Կարենի	Գրքի Գրքահարս	098 926 286	
18	Նիկոլ Նիկոլայի Գրքի	Գրքի Գրքահարս	093-412793	
19	Գրքի Գրքահարս	Գրքահարս	098-46-53-11	
20	Կարեն Կարենի Գրքի	Կարենի Գրքահարս	093506974	
21	Կարեն Կարենի		093605628	
22	Կարեն Կարենի	Ավագուհի Կարենի	093780284	
23	Կարեն Կարենի		095529917	
24	Կարեն Կարենի		098392343	
25	Կարեն Կարենի	Կարենի Կարենի	0.95-65-35-55	
26				
27				
28				
29				
30				
31				

ՀԼ-ների լուսանկարները –Բուրաստան



ՀԼ-ների լուսանկարները – Մարմարաշեն



Հավելված 3. Համայնքային հողերի կամավոր նվիրաբերության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Մշակվել է ԾԻԿ/ՏԿՆ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2016 թվականի N - Ա

ՀՈՂԱՍՏԱՍԵՐ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան և Մարմարաշեն համայնքներին՝ սույն որոշման հավելվածում նշված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելուն՝ Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հունվարի 14-ի N 14-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի՝ ծրագիր 1-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն և Բուրաստան համայնքների տարածքներում տրանսպորտային ուղեանցեր կառուցելու նպատակով:

2. Ընդունել սույն որոշման հավելվածում նշված հողամասերն որպես սեփականություն և ամրացնել «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

3. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարար Գ. Բեգլարյանին՝ սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան և Մարմարաշեն համայնքների հետ կնքել սույն որոշման 1-ին

կետում նշված հողամասերի նվիրաբերության մասին պայմանագրեր և ապահովել գույքային իրավունքների պետական գրանցումը:

4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքների պետական գրանցման և նվիրաբերության պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարվելու են Արարատի մարզի Բուրաստան և Մարմարաշեն համայնքների միջոցների հաշվին:

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հողամասեր նվիրաբերությամբ ընդունելու և «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)

Սույն որոշման ընդունումը պայմանավորված է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի՝ ենթածրագիր 1-ի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն և Բուրաստան համայնքների վարչական տարածքների սահմաններում տրանսպորտային ուղեանց կառուցելու նպատակով Բուրաստան և Մարմարաշեն համայնքների սեփականությունը հանդիսացող որոշ հողամասեր Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու անհրաժեշտությամբ:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 14-Ս որոշմամբ հավանության արժանացած Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի՝ ենթածրագիր 1-ի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ՀՀ Արարատի մարզի Բուրաստան և Մարմարաշեն համայնքների տարածքում նույն համայնքների առաջարկությամբ և Ծրագրի կառավարման խորհրդի ու Ասիական զարգացման բանկի համաձայնությամբ նախատեսվում է կառուցել նոր վերգետնյա ուղեանց (այսուհետ՝ ուղեանց) գյուղատնտեսական տեխնիկայի և ընտանի կենդանիների անցման համար: Ներկայումս ավարտվել են ուղեանցի նախագծման աշխատանքները և Ծրագրի կառավարման խորհուրդը հավանություն է տվել առկա նախագծային փաստաթղթերի հիման վրա ուղեանցի շինարարության իրականացմանը:

Ուղեանցի նախագծային փաստաթղթերի համաձայն՝ ուղեանցի կառուցման նպատակով անհրաժեշտ է օտարել հիշյալ համայնքների սեփականությունը հանդիսացող որոշ հողատարածքներ: Նկատի ունենալով ուղեանցների կարևորությունը համայնքների բնականոն կյանքի համար՝ Բուրաստան և Մարմարաշեն համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները որոշել են ուղեանցի կառուցման համար անհրաժեշտ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

3.Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը.

Որոշման ընդունման արդյունքում սույն որոշման հավելվածում նշված հողամասերը կհանձնվեն որպես նվիրաբերություն Հայաստանի Հանրապետությանը, ինչը հնարավորություն կտա ուղեանցների համար անհրաժեշտ հողամասերը ազատել երրորդ անձանց իրավունքներից և հանձնել կապալառու կազմակերպությանը՝ ՀՀ Արարատի մարզի Մարմարաշեն և Բուրաստան համայնքների վարչական տարածքի սահմաններում տրանսպորտային ուղեանցներ կառուցելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության «Հողամասեր նվիրաբերությամբ ընդունելու և «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

Սույն որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսում:

ՑԱՆԿ

Իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է ՀՀ կառավարության «Հողամասեր նվիրաբերությամբ ընդունելու և «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման

Սույն որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների հիման վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության «Հողամասեր նվիրաբերությամբ ընդունելու և «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

Սույն նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՑԱՆԿ

ՀՀ կառավարության «Հողամասեր նվիրաբերությամբ ընդունելու և «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման հեղինակների (մշակողների)

Սույն նախագիծը մշակվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից: